Հաստատում եմ՝
Տնօրեն՝___________ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

______ սեպտեմբերի 20232թ.

Ստուգված է՝
ՈՒսումնական աշխատանքների գծով

տնօրենի տեղակալ՝___________ Հ.Պետրոսյան
______ սեպտեմբերի 2022 թ.

Digitally signed by DANIELYAN ANNA
5101731038
Date: 2023.10.04 13:35:26 AMT

# ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ուսումնական տարի

Խաչաղբյուրի միջն. դպրոց
Մասնախմբի ղեկավար՝ Ն.Սարգսյան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի և խմբային աշխատանքների կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

ՈՒսումնասիրել կրթության վերաբերյալ համացանցում (օրինակ, lib.armedu.am կայքում) տեղադրված համապատասխան նյութերը և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով :

Առարկայական մասնագետների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր ընդունակությունների և հնարավորությունների չափով ակտիվ մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Ապահովել առարկաների դասավանդման բարձր մակարդակը և սովորողների կողմից նշված առարկաների լիարժեք յուրացումը ըստ սահմանված ծրագրային պահանջների, ինչպես նաև սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացումը դասավանդման ընթացքում:

Դպրոցի սովորողներին, նախապատրաստել դպրոցականների միջազգային և առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

ՈՒսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

2023-2024 ուսումնական տարվա նախնական

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաչաղբյուրի միջն դպրոց

Մասնախմբի ղեկավար՝ Ն.Սարգսյան

2023-2024

Ծրագրեր և դասագրքեր

| № | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Դասագրքերի քննարկում.<br>Կրթության պետական կառավարման կողմից երաշխավորված դասագրքերի քննարկում, դրանց վերաբերյալ հաստատության տնօրենին առաջարկությունների ներկայացում | օգոստոս | Առարկայական մեթոդմիավորում | |
| 2 | Ծրագրերի, թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում.<br>1. ծանոթացում պետական չափորոշչին,<br>2. ծանոթացում առարկայական պետական չափորոշիչներին, 2023-2024 ուստարվա օրինակելի ուսպլանին /նախնական դասաբաշխում և տնօրենին առաջարկությունների ներկայացում/, երաշխավորություններին, ծրագրերի իրականացումն ապահովող այլ ակտերի<br>3. ծանոթացում պետական ծրագրերին,<br>4. ծանոթացում նոր ուստարվա մեթոդական նամակներին,<br>5. ծանոթացում հումանիտար առարկաներից սովորողների ընթացիկ գնահատման նյութերի փաթեթին,<br>6. ծրագրերի և դասագրքերի համապատասխանության քննարկում,<br>7. ծանոթացում սեպտեմբերյան խորհրդակցության ցուցումներին,<br>8. թեմատիկ պլանների կազմում, քննարկում և հաստատում,<br>9. առաջին կիսամյակում ծրագրերի կատարողականի ստուգում,<br>10. տարեկան ծրագրերի կատարողականի ստուգում,<br>11. արդյունքների ամփոփում,<br>12. թեմատիկ պլանի վերանայում,<br>13. Մեթոդմիավորման՝ 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանի նախագծի կազմում: | սեպտեմբեր<br><br><br><br>սեպտեմբեր<br><br>հոկտեմբեր<br><br><br>նոյեմբեր<br><br>դեկտեմբերի<br><br>հունիս | Առարկայական մեթոդմիավորում | |

# Մեթոդական միավորման ուսումնադասիարակչական աշխատանքների պլան-ծրագիրն ըստ ամիսների

| Հերթական համար | Գործողություն | Ժամանակ | Կատարող | Արդյունքների ամփոփում |
|---|---|---|---|---|
| 1 | ՄՄ նիստ 1<br>Օրակարգ<br>Մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում<br>• Հանրակրթական առարկայական չափորոշիչների համապատասխան ուսումնական ծրագրերի կազմում՝, ուսումնական պլանների, նախագծերի քննարկում,<br>• Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում,<br>Սովորողներին դասագրքերով և այլ ուսումնական գրականությանբ ապահովելու հետ առնչվող խնդիրների քննարկում | 29.08.2023 | ՄՄ նախագահ, անդամներ,փոխտնօրեն | |
| | Ներկայացնել նոր ուսումնական տարվա ուսումնական ծրագրերը, պետական չափորոշիչները, կազմել թեմատիկ ծրագրեր՝կատարելով գրավորների քանակի և անցկացման ձևի հետ կապված փոփոխություններ: | | | |
| | | | | |
| | | | | |
| 2 | ՄՄ նիստ 2<br>Օրակարգ<br>• Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում , ամփոփում<br>• Եռօրյա շաբաթների հետ կապված աշխատանքների | 28.09.2023 | ՄՄ նախագահ, անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ճիշտ կազմակերպման մեթոդաբանություն<br>• Ուսուցիչների առարկայական թեմատիկ ծրագրերի քննարկում, հաստատում<br>• Օրվա դասի պլանների մշակման և կազմման հարցը | | | |
| | Նախորդ ամսվա աշխատանքների  քննարկում , ամփոփում , | | | |
| | Քննարկել և հաստատել ուսուցիրների թեմատիկ ծրագրերը,որոնց մեջ  ընդգրկված են  արդեն հստակեցված գրավորների քանակը (2 թեմատիկ, 1 կիսամյակային ,գործնական/ | | | |
| 3 | ՄՄ նիստ 3<br>Օրակարգ<br>• Նախորդ ամսվա աշխատանքների  քննարկում , ամփոփում<br>• Մասնախմբի անդամներից մեկի   կողմից գիտամեթոդական  ելույթների   զեկուցում<br>• Էլեկտրոնային դասամատյանների լրացման վիճակը<br>• Օլիմպիադայի  դպրոցական փուլի կազմակերպչական հարցերի կազմակերպում<br><br>Բաց դասերի, արտադասարանական միջոցառումների<br>• Առարկայական շաբաթի քննարկում, ժամանակացույցի հաստատում | 27.10.2023 | ՄՄ նախագահ, անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գիտամեթոդական ելույթ ՄՄ անդամներից մեկի կողմից<br>Թեմա<br>ա/Համացանցի նյութերի օգտագործում և կիրառումը պատմության և աշխարհագրության,հայրենագիտության,բնագիտության ժամերին (պատմական ֆիլմերի դիտում, հետաքրքիր նյութերի լսումներ.) | | | |
| | Առարկայական շաբաթի քննարկում, ժամանակացույցի հաստատում | | | |
| 4 | ՄՄ նիստ 4<br>Օրակարգ<br>• Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում , ամփոփում<br>• Տնօրինության կողմից տրվող գրավորի իրագործում, արդյունքների ամփոփում:<br>• Թեմատիկ գրավորների, գործնական աշխատանքների, ռեֆերատների կատարողականի վերահսկում, տետրերի առկայության ստուգում;<br>• 1-ին կիսամյակի թեմատիկ պլանի կատարողականի ստուգում<br>• | 26.11. 2023թ. | ՄՄ նախագահ և անդամներ | |
| | Կազմակերպել տնօրինության կողմից տրվող գրավորի ժամանակացույցը, նպատակը | | | |
| | Նախապատրաստել այն աշակերտների ցուցակները, ովքեր 1-ին կիսամյակում ավարտական քննություններ պետք է հանձնեն, նրանց հետ կատարել խորհրդատվություն՝ այդ քննությունները հաջողությամբ հանձնելու համար | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վերստուգել թեմատիկ գրավորների, գործնական աշխատանքների, ռեֆերատների կատարողականի կատարումը | | | |
| | Վերստուգել 1-ին կիսամյակի թեմատիկ պլանի կատարողականը, բացահայտել անհամապատասխանությունները | | | |
| 5 | ՄՄ նիստ 5<br>Օրակարգ<br>• 2-րդ կիսամյակի 12-րդ դասարանցիների թեմատիկ պլանների հաստատում ,<br>• 1-ին կիսամյակի աշխատանքների արդյունքների վերլուծություն<br>• Հասարակագիտության և պատմության շաբաթի նախապատրաստում<br>• Օլիմպիադայի տարածքային փուլին երաշխավորված աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքների կազմակերպում<br>• Ուսուցման նոր մեթոդների կարևորումը, որպես կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ;<br>• Փոխադարձ դասալսումներ | 26.12.2023 | ՄՄ նախագահ և անդամներ | |
| | 2-րդ կիսամյակի 12-րդ դասարանցիների թեմատիկ պլանների կազմում , հաստատում | 1-ին շաբաթ | | |
| | 1-ին կիսամյակի աշխատանքների վերլուծություն, կատարված աշխատանքների ձեռքբերումներն ու բացթողումները | 1-ին շաբաթ | | |
| | | 3-րդ շաբաթ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | Կազմակերպել և անցկացնել ՄՄ մեջ ընդգրկված առարկաների օլիմպիադաների տարածքային փուլը | 4-րդ շաբաթ | | |
| 6 | ՄՄ նիստ 6<br>Օրակարգ<br>• Օլիմպիադաներ, տարածքային փուլ անցած աշակերտների հետ աշխատանքներ<br>• Աշխարհագրության և հայոց եկեղեցու պատմության շաբաթի կազմակերպում և փոխադարձ դասալսումներ | 23 .01..2024<br>Տարվա ընթացքում | ՄՄ նախագահ և անդամներ | |
| | Ուսուցման նոր մեթոդների կիրառում | Տարվա ընթացքում | | |
| | Օլիմպիադայի հաջորդ փուլ անցած աշակերտների հետ աշխատանքի կազմակերպում | | | |
| 7 | . ՄՄ նիստ 7<br>Օրակարգ<br>• Փետրվարին կատարած աշխատանքների քննարկում<br>• Օլիմպիադայի մարզային փուլի արդյունքների քննարկում և ամփոփում<br>• Խնդիրներ ուսման որակի բարձրացման ուղղությամբ<br>• Բարձր դասարաններում վերջնարդյունքների ապահովման նպատակով սովորողների կարողությունների զարգացման գնահատում կազմակերպելու հարցը<br>• Սեմինարների կազմակերպում և քննարկում<br>• ՈՒսուցման արդի մեթոդների կիրառում | 25.02 2024թ | ՄՄ նախագահ և անդամներ | |
| | Քննարկել նախորդ ամսվա աշխատանքները | | | |
| | | | | |
| | | | | |
| 8 | ՄՄ նիստ 8<br>Օրակարգ | 22.03. 2024թ. | ՄՄ նախագահ և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Նախորդ ամսվա կատարած աշխատանքների ամփոփում<br><br>Արդի մեթոդների կիրառման արդյունավետությունը<br><br>• բ/ Հաշվի առնելով  տվյալ պահին գործող պետական չափորոշիչները,  բոլոր ուսուցիչների առաջարկությունները,կարծիքները՝  ստուգել աշակերտների կիրառական և վերլուծական կարողությունների զարգացման վիճակը<br><br>Սեմինար վարող ուսուցիչների կատարած աշխատանքի վերլուծությունը<br><br>մմ նիստ9<br>Օրակարգ | 25.04.2024 | | |
| | Ստուգել չափորոշչի նվազագույնի պահանջի յուրացումը դասարաններում | | | |
| | 120-200ժամ բացակայություն ունեցող  սովորողների համար քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում | | | |
| | Որոշել որ դասարաններում են տրվելու գրավոր աշխատանքներ, տեսակը և հանձնարարել այդ դասարաննրում չդասավանդող ուսուցիչներին կազմել  համապատասխան գրավոր աշխատանքներ | | | |
| 9 | ՄՄ նիստ 10<br>Օրակարգ<br><br>• Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում<br>• 9-րդ և 12-րդ դասարանցիների ավարտական | 23.05.2024թ. | Մ/մ նախագահ և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քննությունների կազմակերպում<br>• Տնօրինության կողմից վերահսկվող կիսամյակային գրավորների կազմակերպում<br>• Տնօրինության կողմից վերահսկվող կիսամյակային գրավորներ անցկացում, արդյունքների ամփոփում<br><br>• Տարեկան ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում, աշխատանքների ամփոփում:<br><br>• ա/Ստուգել թեմատիկ պլանների կատարողականը,թեմատիկ գրավորների, տետրերի առկայությունը, ստուգումների համապատասխանությունը չափորոշիչներին:<br><br>• Պահանջել մ/մ անդամներից խնամքով և գրագետ աշխատել մատյանների հետ {emis.am] | | | |
| | Ամփոփել նախորդ ամսվա աշխատանքները, կազմած փոխադրական թեստերը | | | |
| | Նախապատրաստվել 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննություններին, | | | |
| | Կազմակերպել տնօրինության կողմից վերահսկվող կիսամյակային գրավորների աշխատանքները | | | |
| | Ստուգել տարեկան թեմատիկ ծրագրերի կատարողականը, քննարկել տարբերությունները, գրավորների քանակի տեսակի պահպանումը | | | |
| 10 | ՄՄ նիստ 11<br>Օրակարգ<br><br>• Ամփոփել 9-րդ և 12-րդ դասարանցիների քննությունների արդյունքները:<br><br>• Ամփոփել ավարտական քննությունների արդյունքները՝ | Հունիս 2024թ.<br><br>2-րդ շաբաթ | ՄՄ նախագահ և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 12-րդ դաս պատմության<br><br>• Ուստարվա աշակերտների առաջադիմության և որակի վերլուծություն, եզրակացությունների հանգում:<br>• Ելնելով առաջադիմության և որակի վերլուծություններից՝ հաջորդ տարվա ուսումնական ծրագրերի ռազմավարության մշակում:<br>• Բաց թողումների վերացում և շտկում,աշակերտների առաջադիմության և որակի բարձրացման ուղիների որոնում | 3-րդ շաբաթ<br><br>4-րդ շաբաթ ՝ | | |
| | Ամփոփել 9-րդ և 12-րդ դասարանցիների քննությունների արդյունքները, քննարկել բացթողումները, ձեռքբերումները : | 1-ին շաբաթ | | |
| | Ամփոփել ավարտական քննությունների արդյունքները՝<br>12-րդ դասարանում պատմության<br>քննությունների արդյունքների քննարկում ամփոփում | | | |
| | Ներկայացնել 2020-21 ուստարվա աշակերտների առաջադիմության և որակի վերլուծությունը, եզրակացությունների հանգում: | | | |
| | Ելնելով առաջադիմության և որակի վերլուծություններից ՝կատարել հաջորդ տարվա ուսումնական ծրագրերի ռազմավարության ընտրում, գալիք աշխատանքների կատարում | | | |

## Դասալսումներ և բաց դասեր

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Իրականացնել դասալսումներ հետևյալ քանակով՝<br>1. Մ/մ նախագահ՝ շաբաթական առվազն 3-5 ժամ<br>2. Անդամներ՝ շաբաթական առնվազն 3 ժամ | Տարվա ընթացքում | մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Խմբային դասալսումներ.<br>1. կոնկրետ դասեր որոշակի առարկաներից,<br>2. կոնկրետ ուսուցչի մոտ որևէ առարկայի դասը,<br>3. որոշակի կոնկրետ նպատակներով դասալսումներ | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման անդամներ | |
| 3 | Օրինակելի կամ ցուցադրական բաց դասերի կազմակերպում.<br>1. օրինակելի դասեր փորձառու ուսուցիչների մոտ, 2.<br>բաց դասեր մեթոդմիավորման շրջանակներում<br>3. համադպրոցական բաց դասեր: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |

## Զեկուցումներ, զրույցներ

| ԸՆԹԵՐՑՈՂԸ | № | ՄԵԹՈԴԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|
| Սարգսյան Ն. | 1 | Գնահատման մեթոդաբանություն | |
| Ա.Ղազարյան | 2 | Հայրենասիրության դաստիարակությունը դպրոցում | |
| Ռ.Բաղդասարյան | 3 | Ուխտագնացություն | |
| Ա.Ղազարյան | 4 | Համացանցի նյութերի օգտագործում և կիրառումը պատմության ,հայրենագիտության,հասարակագիտության ժամերին (պատմական ֆիլմերի դիտում, հետաքրքիր նյութերի լսումներ.) | |
| Ռ.Բաղդասարյան | 5 | Կրթություն-գիտություն-արտադրություն կապի դեր տնտեսության զարգ. գործում | |
| Ա.Ղազարյան | 6 | Ուսուցանող գնահատում | |
| Ա.Ղազարյան | 7 | Միջառարկայական կապերը պատմություն, հայրենագիտություն առարկաների շրջանակներում | |
| Ն.Սարգսյան | 8 | 12-րդ դասարանի առարկայացանկում պատմության առարկայի ներդրման առավելությունները | |

Մեթոդամանկավարժական աշխատանքների քննարկումներ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մեթոդմիավորման առարկաներին վերաբերող նոր գրքերի, պարբերականների և առանձին հոդվածների քննարկում:<br>Համացանցի տարբեր կայքերի նյութերի ուսումնասիրություն:<br>Օրվա պլանների կազմման մեթոդիկա: | Սեպտեմբեր, տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |
| 2 | Մեթոդմիավորման առարկաներին վերաբերող մեթոդական հարցերը /<<Տեղեկագիր>> 2020, 3-րդ, 4-րդ համարներ/, մեթոդական նամակները: | Սեպտեմբեր | Մեթոդմիավորման նախագահ, անդ. | |
| 3 | Անհատական խորհրդատվություն մեթոդմիավորման առարկաների դասավանդման խնդիրների վերաբերյալ: | Տարվա ընթացքում | Փորձառու ուսուցիչներ | |
| 4 | Դաստիարակության դժվարություններն այսօր: | Նոյեմբեր | Մեթ. անդամներ | |
| 5 | Ուսուցչի էթիկան: | դեկտեմբեր | Մեթ. անդամներ | |
| 6 | Գնահատման մեթոդաբանություն, գնահատման նոր մոտեցումներ: | Մարտ | Մեթ. անդամներ | |
| 7 | Դասավանդման նոր մեթոդների քննարկումը և կիրառումը: | Տարվա ընթացքում | Մեթ. անդամներ | |
| 8 | Մեթոդական գրականության որոնումը համացանցում: | Տարվա ընթացքում | Նախագահ, անդ. | |
| 9 | ԿԳՆ կողմից երաշխավորված մեթոդական նոր ձեռնարկների կիրառությունը ուսուցման գործընթացում: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման անդամներ | |
| 10 | Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման հետ կապված աշխատանքներ: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման անդամներ | |
| 11 | Սովորողների հետ անհատական աշխատանքի կազմակերպում, անհատական աշխատանքի ձևերի ընտրություն: | Սեպտեմբեր | Մեթոդմիավորման անդամներ | |
| 12 | Աշխատանք շնորհալի երեխաների բացահայտման և նրանց ունակությունների զարգացման ուղղությամբ: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Ավարտական քննությունների նախապատրաստման գործընթացի կազմակերպում, վերանայում, աշակերտների գիտելիքի մակարդակի բարձրացում: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման անդամներ | |

Ստուգումներ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Հումանիտար առարկաներից 1-ին կիսամյակի կիսամյակային ամփոփիչ առաջին գրավոր աշխատանքի կազմակերպում և անցկացում: | Առաջին կիսամյակ | Մեթ. անդամներ | |
| 2 | Արդյունքների ամփոփում և քննարկում: | Առաջին կիսամյակ | Մեթ. անդամներ | |
| 3 | Հումանիտար առարկաներից 2-րդ կիսամյակի կիսամյակային ամփոփիչ երկրորդ գրավոր աշխատանքի կազմակերպում և անցկացում: | Երկրորդ կիսամյակ | Մեթոդ. նախագահ | |
| 4 | Արդյունքների ամփոփում և քննարկում: | Երկրորդ կիսամյակ | Մեթ. անդամներ | |
| 5 | Թեմատիկ, ուսուցանող գրավորների, գործնական աշխատանքների քանակի, բովանդակության, որակի ստուգում: | Տարվա ընթացքում | Մեթոդ. նախագահ | |
| 6 | Մատենավարության ստուգում: | Տարվա ընթացքում | Մեթոդ. նախագահ | |
| 7 | Ծրագրերի կատարողականի ստուգում: | Յուրաքանչյուր ամիս | Մեթոդ. նախագահ | |
| 8 | Մատյանի գրանցումների և թեմատիկ պլանի համապատասխանության ստուգում: | Յուրաքանչյուր ամիս | Մեթոդ. նախագահ | |
| 10 | Օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացում: | Հունվար, փետրվար | Մեթոդ. նախագահ, անդամներ | |

Աշխատանք մեթոդական անկյունում

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մեթոդական նորույթների ուսումնասիրություն.<br>1. նոր հրատարակված գրքերի և հոդվածների ցուցադրում,<br>2. մեթոդական, մանկավարժական, մասնագիտական լավագույն զեկուցումների ցուցադրում,<br>3. ուսուցիչների դասավանդած դասարաններում առաջադիմության տարեվերջյան արդյունքների ամփոփում և ցուցադրում,<br>4. առաջավոր փորձի մասին տեղեկությունների հաղորդում, | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |
| | 5. առաջավոր փորձի ուսումնասիրության արդյունքների հաղորդում: | | | |
| 2 | <<Կլոր սեղանների>>, բանավեճերի հաճախակի կազմակերպում: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |
| 3 | Գրավոր աշխատանքների քանակի, տեսակի և արդյունավետության խնդիրների հետ կապված հարցերի քննարկում: | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |
| 4 | Արտադպրոցական գործնական պարապմունքների կազմակերպում, արդյունքների ամփոփում, ուսումնական նյութերի, ստենդների, պատի թերթերի ստեղծում | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |

Պատմա-աշխարհագրական մեթոդմիավորման տարեկան աշխատանքային պլանը բխում է Խաչաղբյուրի միջնակարգ դպրոցի 2023-2024ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից: Ըստ ամիսների աշխատանքային պլանի բովանդակությունը կարող է լրացվել, վերանայվել, խորացվել: